

# ԱՔԵՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ԳՍԱՆ” ԴՈՒԿ . ԺԸ . 16 :

ՀԱՏՈՐ ԺԶ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , ՄԱՐՏ 1 , 1887

ԹԻՒ 3

## ԱՖՂԱՆԻՍԱՆ

Աշխարհիս երկու մեծ Պետութիւնք են Ռուսիա և Մեծն Բրիտանիա . և Աֆղանիստանի դիրքին կարևորութիւնն յայսմ է որ այն կը գտնուի այս երկու մեծ Պետութեանց մէջ աեղ : Ռուսիա կ'իշխէ հիւսիսային և Մեծն Բրիտանիա հարաւային կողմը , և երբ անոնք իրարու զարնուին , պատերազմի դաշտը պիտի ըլլայ հաւանականապէս Աֆղանիստան :

Աֆղանք ինքնին են անկախ ժողովուրդ , թուով իբր 4,000,000 , բայց կը բաժնուին այլ և այլ ցեղերու որք շատ անգամ թշնամի են իրարու : Ներկայ ժամանակիս մէջ Ղելզաք , գլխաւոր ցեղերէն մին , ապրտամբած են Էմիրին դէմ : Այս ներքին անմիաբանութիւնք աւելի պիտի դիւրացունեն Ռուսիոյ Աֆղանիստան մտնելը երբ որ ուզէ :

Աֆղանիստանի այժմու Էմիրն է Ապտիւլ Րահման Խան որոյ պատկերը կը դնենք հոս : Անոր հաւր , Տոսթ Մուհամմէտ , Անգղիոյ հետ պատերազմեցաւ շատ տարիներ , սկսելով 1838էն : Գերի տարուեցաւ Հնդկաստան և անոր մայրաքաղաքը գրաւուեցաւ Անգղիացի զօրքէն , բայց պատերազմը սուղի նստաւ Անգղիացոց կենաց և դրամոյ կորուստով :

Տոսթ Մուհամմէտ իւր իշխանութեան ժամանակի վերջին մասին մէջ դաշնակից էր Անգղիացոց հետ և ընդարձակեց իւր տէրութիւնը պատերազմի մէջ իւր քաջութեամբ , և քաղաքագիտութեան մէջ իւր հանճա :



ԱՖՂԱՆԻՍԱՆԻ ԷՄԻՐԸ

րով : Մեռաւ 1863ին , ճիշդ է Հերաթ յաղթանակ մը տանելէն ետքը : Անոր յաջորդեց Շիր Ալի , այժմու Էմիրին հորեղբայրը , որ պատերազմ ըրաւ Անգղիացոց հետ 1879ին , բայց յաղթուեցաւ և մեռաւ հետեւեալ տարին : Անոր յաջորդեց որդին Եագուլթ , բայց որովհետեւ նա հաւանած էր Քապուլի Անգղիական հիւպատոսին սպանման , Մեծին Բրիտանիոյ զօրքերը դարձեալ արշաւեցին քաղաքին վրայ և գերի բռնեցին զնա : Անոր յաջորդեց 1880ին այժմու Էմիրը որ յառաջիմէ կը գտնուէր Ռուսիոյ պաշտպանութեան ներքե : Նա է զօրաւոր և մտացի իշխան մը , և անոր իշխանութեան ներքե Աֆղանիստան նշանաւոր յառաջադիմութիւն ըրած է : Բայց տարակուսելի է թէ արդեօք Ռուսիա ընդ երկար պիտի յարգէ Աֆղանաց անկախութիւնը :

## ՏԵՂԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԵՆԱԼ

Չեզի պատմութիւն մը ընեմ Յակոբոս անուն պատանոյ մը վրայ որ մեծ հպատակութիւն ցուցոց Բրիտանի և քաջութեամբ յարատեց մնալ անոր դրօշին ներքե : Այս պատանին շատ աղքատ էր , ունէր այրի մայր մը և երկու քոյրեր : Ասոնք ամէնքն ունէին միայն մէկ սենեակ կ'երթար գործել եօթն մղոն հեռին , և կու գար տուն Շաբաթ օր և կը մընար հոն մինչև Երկուշաբթի որպէս զի կարող ըլլար երթալ անոնց հետ Եկեղեցի դըր կը սիրէր յոյժ : Քանի մը չար աղայք որք կը բնակէին անոր տան մօտ , կ'ատէին զՅակոբոս ,

մասն զի նա չէր ընկերանար անոնց հետ շարութիւն գործելու մէջ : Շաբաթ երեկոյ մը , մինչ Յակոբոս կը դառնար տուն , վերոյիշեալ չար աղայք պահուրտեցան ծառոց խուճիկ մը ետեւը , իրենց հետ ունենալով կատաղի շուն մը :

«Պէտք է որ ըսես ինչ հայհոյական խօսքեր որ ըսինք , եթէ ոչ վրադ կ'արձակենք շունը :»

«Թոյլ տուէք երթամ , ես տուն պիտի երթամ :»

«Քայլ մը անգամ պիտի չառնուս , մինչև որ բերնէդ չհանես այս երգումը :»

«Ես չեմ համարձակիր ըսել զայդ , և դուք չունիք իրաւունք առաջարկել զայդ ինձ : Ես պիտի չհանեմ բերնէս այդ չար խօսքը :»

Յակոբոս տեսաւ որ անոնք կ'արձակէին շունը , բայց ըսաւ ինքն ի-

րեն, «Աստուած գոցեց առիւծներուն բերանը, և կրնայ գոցել նաև շան բերանը:»

Այնպէս ալ եղաւ: Շունը հաչեց սաստիկ և վազելով յարձակեցաւ աւնոր վրայ, բայց ոչ խածաւ և ոչ փնաս մը ըրաւ անոր: Շատ երջանիկ պառկեցաւ հանգրստացաւ Յակոբոս այն գիշերը, և այնուհետև միշտ սորվեցաւ ևս առաւել ապաւինիլ Աստուծոյ, և աւելի քիչ վախնալ մարդոցմէ, վասն զի այնպիսի ողորմութիւն գտնելով ազատուեցաւ վտանգէ:

Այս աղքատիկ պատանին ցուցուց թէ ճշմարտապէս աղնիւ հոգի ունէր: Ո՛րչապէս մարտիրոսի մը հոգին ունէր նա, այնպիսի մէկու մը հոգի որ պատրաստ է զոհել իւր կեանքը, եթէ հարկը պահանջէ, բայց միշտ ապաւինել Աստուծոյ զօրեղ բազկին:

ՄԱՏԱԿԱՍԳԱՐ

Որովհետև Մատկասգար կղզի է, կարծելու չենք թէ աննշան է մեծութեամբ կամ կարեւորութեամբ: Մատկասգարի երկայնութիւնն է 970 մղոն ևս ունի իբր 3 միլիոն բնակիչ: Ասոնք կը բաժնուին քանի մը ցեղերու, որոց զխաւորն են Հովայք և Մաքալավայք: Հովայք են տիրող ցեղը, և կը բնակին կղզւոյն կեդրոնական և արևելեան բաժնին մէջ: Ունին բաց թուփ գոյն, և բարեձեւ կերպարան նման Մալայեանց: Մաքալավայք կը բնակին արևմտեան ծովեզերքը, և են սեւամորթ, և ունին ցցուած կերպարանք նման Ափրիկեցւոց: Մարմնով խոշոր են ասոնք քան Հովաները, և աւելի շատ են թուով: Ասկէ դար մը առաջ անոնց ձեռքն էր կղզւոյն իշխանութիւնը, և Հովայից յետագայ յաղթութիւնը կը ցուցնեն թէ մարդու խելքը ո՛րչափ դժբաղանջ է լոկ մարմնական ուժէն:

Հովայից իշխանութեան հիմնադիրն և զաւ Ռատամա Ա., որ տիրեց 1810էն մինչև 1828, և նմանցուած է Ռուսիոյ Մեծին Պետրոսի: Ռատամա Ա. տեսաւ թէ դաս-

տիրակութիւնը և քաղաքակրթութիւնն է որ կու տայ զօրութիւն, վասն որոյ կանչեց Անգղիացի պաշտօնակալներ կրթելու զինուորները, և զրկեց իւր պատանեաց յառաջադէմներէն օտար երկիր-


նոր այրին Ռանավարնա Ա., որ ստիպեց միախոնարներն կլլել կղզիէն և աշխատեցաւ ջնջել անկէ Քրիստոնէութիւնը: Քրիստոնէաներէն քանի մը հարիւրներ ըսպանուեցան անգլոթ մահուամբ, շատ ու-



ՄԱՏԱԿԱՍԳԱՐԻ ԹԱԳՈՒՆԻՆ

րիշներ ևս բանտարկուեցան կամ գերի եղան: Այս թագուհոյն իշխանութիւնը վերջացաւ 1861ին, և անոր յաջորդեցին երկու ուրիշներ որոց իշխանութիւնը կարճ տեւեց: Այնուհետև զահն ելաւ Ռանավարնա Գ.: Ասոր առաջին գործերէն մին եղաւ հրապարակաւ դաւանել Քրիստոնէութիւնը, և այնուհետև շատ չանցաւ թագուհին և անոր այրը, որ էր նաև առաջին պաշտօնեայ, մկրտուեցան: Յաջորդ տարին այրուեցան արքունի կուռքերը, և այն ժամանակէն հետէ լուսաւորութիւնն ըրած է արագ յառաջադիմութիւն: Լոնտոնի Միսիոնարական Ընկերութիւնը, Անգղիական ուրիշ ընկերութիւն մը, Նորվեկիոյ Լուսեռականք, և Գաղտոյ կաթողիկոս, կ'աշխատին դարձունել Մատկասգարի ժողովուրդը Քրիստոնէութեան, և ունեցած են նշանաւոր յաջողութիւն: Ասկէ տասներկու տարի առաջ կը գտնուէին հոն 300,000 Քրիստոնեայք, և անկէ ի վեր այս թիւն արագ կ'աճի հետզհետէ:

Իսրի թագուհին մեռաւ 1883ին, և անոր յաջորդեց այժմու թագուհին, Ռանավարնա Գ.: Սա ևս կ'երեւի թէ աջնիւ կլին մի է: Հոս կը գնենք անոր պատկերը, նաև անոր մայրաքաղաքին, Անթանիսարիւպի պատկերը, որ ունի իբր 80,000 բնակիչ: 1885է հետէ Գաղիացիք թեւարկութիւն մը հաստատած են կղզւոյն վրայ, բայց Հովայք շատ անկախ են, և չեն տար թոյլ Գաղիացւոց միջամտել իրենց ներքին գործոց:



ՄԱՏԱԿԱՍԳԱՐԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ԳԱՂԻԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԿԱՏՈՒՆ


Ներ դաստիարակուելու համար: Թոյլ տրուաւ Քրիստոնեայ միախոնարաց մտնել իւր կղզին յամին 1820, և անոնք սնմթջապէս սկսան բնիկներուն լեզուին գիր յօրինել և մտցունել հոն օգտակար արհեստներ: Դժբախտապէս Ռատամա Ա. մեռաւ իւր ծաղիկ հասակին մէջ, և դահը նստաւ ա-

Լրագրի մը թղթակից կը գրէ հետագայ պատմութիւնը զոր կը կարծէ ճշմարիտ վասն զի ակնատեսաւ մը պատմած է զայն անոր: Խրիմու պատերազմին ժամանակը երբ երիտասարդ Գաղիացի զինուոր մը ելաւ իւր գիւղէն երթալ հոն, գը-

նաց անոր հետ նաև կատուի մը ձագոր մեծցած էր անոր մօտ խրճիթին մէջ: Պատանւոյն սիրտը յարեցաւ իւր ընտանեաց այն փոքրիկ և անխօս անդամին, և զայն կը նստեցունէր գերեկը իւր մախաղին վրայ երբ կ'երթար տեղէ տեղ, և դիչերը՝ անկիւն մը իւր պառկած տեղը: Կատուն կ'ուտէր իւր կերակուրը իւր տիրոջ ծընգաց վրայ, և բոլոր զինուորք շատ կը սիրէին զայն: Այն առաւօտ որ վաշտը որուն կը վերաբերէր յիշեալ պատանի զինուորք, առաջին անգամ հրաման ընդունեց գործել, զինուորը մնաս բարև բտելով իւր կատուին՝ զայն խնամելու հողը յանձնեց իւր հիւանդ մէկ ընկերին: Իբր միջոց մը ճամբայ գացած հեռացած էր բանակատեղիէն, և ահա մեծ զարմանքով տեսաւ որ կատուն կը վազէր դէպ ինքը: Վերցուց զայն գետնէն, և դրաւ անոր սովորական նստարանին, մախաղին, վրայ, և շուտով դարձեալ սկսաւ ճակատամարտը: Երկու անգամ ինկաւ զինուորը բայց կատուն պնդիւ փակած էր անոր: Ի վերջոյ սաստիկ վիրաւորուելով արևուն սկսաւ հոսիլ դաշտին մէջ: Երբ կատուն տեսաւ որ արին կը վազէ իւր տիրոջ մարմնէն, իսկոյն ելաւ նստաւ անոր վրայ և սկսաւ լիզել անոր վէրքը շատ եռանդով: Այսպէս ըրաւ քանի մը ժամ մինչև որ եկաւ վիրաբոյժ և տանել տուաւ երիտասարդը վիրաւորելոց վերանը: Երբ խելքը վրան եկաւ, առաջին հարցումն եղաւ «Պիտի առողջանամ արդեօք?» «Այո, բարեկամ», պատասխանեց վիրաբոյժը, «չորհա՛ւ կարծիքն թու փոքրիկ կատուիդ, վասն զի եթէ նա չձգէր վէրքդ իւր լեզուաւ այնպէս եռանդով, դուն շատ տկարացած պիտի ըլլայիր արին շատ կորսնցունելով և պիտի չառողջանայիր»: Կրնաք վստահ ըլլալ թէ կատուին աղէկ խնամք տարուեցաւ. և հակառակ ամենայն կանոնաց, կատուին թոյլ տրուեցաւ երթալ իւր տիրոջ հետ հիւանդանոց, ուր բաժին կ'ընդունէր իւր տիրոջ յատկացած ընտրելագոյն կերակուրներէն, և շատ սիրելի եղաւ հոն:

ՈՒՍՏՈՂՔ  
 Կրօնական ազատութիւնը զոր Անդղիայիք և Սկոտլանդիք հիմա կը վայելին կատարելագոյն, ձեռք բերուեցաւ ոչ առանց չարաբանաց և մարտիրոսութեան: Այն օրերուն մէջ որ անմիջապէս յաջորդեցին բարեկարգութեան, անհրաժեշտ էր որ կուսակցութեան զգացմունք շատ սաստիկ ըլլային: Սկոտլանդացոց մէջ կը գտնուէին կարգ մը մարդիկ այնչափ զղուած Պապականութենէն, որ խղճի մասք կը մերժէին եկեղեցւոյ

զջարլը Բ. Կաթոլիկ ի ներքուստ, և կը մերժէին հնազանդել երկրպագութեան մասին դրուած կանոններուն: Այս հարածանք տեսց մինչև որ ձէյն Բ., եղբայր և յաջորդ Չարլզ Բ. ի, գահընկէց եղաւ և կրօնի կատարեալ ազատութիւն հաստատուեցաւ: Պատկերը կը ցուցնէ մարտիրոսացեալ Ռիտտոլաց յիշատակի արձանը որ կը կանգնի նոյն իսկ այն գերեզմանատան մէջ ուր Ռիտտոլ ստորագրուեցաւ: Բանաստեղծական քանի մը տղերէ ետքը այսպէս փորագրուած է անոր վրայ. «1661, Մայիս 27 է, երբ յոյժ աղնիւ Մարգրիտ Արկայլի գլխատուեցաւ, մինչև 1688 Ռեպուբլիկար 17, երբ Մր. ձէյն Բ. հետեւիք մարտիրոսացաւ, այլ և այլ կերպելով սպաննուեցան մի և նոյն պատճառաւ իբր 1,800 անձինք, որոցմէ իբր հարիւր աշուտականք, պարոնք, քարոզիչք և այլք գլխատուեցան յիշակալուրի. աղնիւ մարտիրոսք Յիսուսի Քրիստոսի: Անոնց մեծ մասը հոս թաղուած են:»



ՅՅԺԱՐՈՒԹԵԱՄԲ  
 ՀՆԱԶԱՆԴԻՒ ՄՕՐԸ  
 Փոքրիկ Հարի տեսած էր որ իրմէ տարիքով մեծ տղայք կը թուցունէին իրենց թուցիկները տուներուն տանիքներէն. և կը խորհէր թէ զուարճալի բան կ'ըլլար եթէ ինքն ալ կարող ըլլար ընել այնպէս: Վասն որոյ եկաւ իւր մօրաքեռն, և ըսաւ.

ՄԱՐՏԻՐՈՍԱՅԵՒՆ ՈՒՍՏՈՂԱՅ ՅԵՄԱՍԿԻ ԱՐՁԱՆԸ  
 Կուսավարութեան Եպիսկոպոսական ձեռ կամ գրաւոր աղօթքի սովորութիւնը: Անոնք կազմեցին խումբ մը որ կը ճանչցուէր Ռիտտոլք անուամբ, ու խտին պատճառաւ զոր կը ստորագրէին անոնք հուստարիմ ըլլալ իրենց սկզբանց: Թուղթը տարածեցին տափարակ գերեզմանաքարի մը վրայ Էպիսկոպոսի գերեզմանատանց միջոց մէջ, և հոն աղօթքներ մատուցուած և արտասուքներ թափուած միջոցին ստորագրուեցաւ այն: Երբ Չարլզ Բ. որոյ հայրը զլստաւուեցաւ 1649 ին, դարձաւ արտոյէ և գրուեցաւ թաղաւոր, հարածանք սիրաւ Ռիտտոլոց գէմ, որք կը կարծէին

«Մօրաքոյր Մարիամ, հրաման կու տամ ինձ որ ելլեմ ամեն տանիքին վրայ և թուցունեմ թուցիկս:»  
 Մօրաքոյրը կ'ուզէր ընել ամէն բան որ վայելուչ էր՝ զՀարի հաճեցունելու համար, բայց խորհեցաւ թէ անոր այս խնդրած բանը շատ վտանգաւոր էր, վասն որոյ ըսաւ.  
 «Ոչ, Հարի, տղաս, կարծեմ այդ վտանգաւոր տեսակ խաղ է: Եթէ ինձ կը հարցնես, ես չեմ ուզեր որ ելլես տանիքին վրայ:»  
 «Շատ աղէկ, ուրեմն ես կ'ուզեմ անէն դուրս ելլել և երթալ կամուրջին վրայ», ըսաւ Հարի: Մօրաքոյրը ժպտեցաւ. և ըսաւ թէ կը յուսամ թէ միշտ հնազանդ պիտի ըլլատ ինչպէս եղար հիմա:

«Հարի, ի՞նչ կ'ընես», ըսաւ անոր մայրն անդամ մը:

«Իմ նոր պտուտակս կը դարձունեմ, մայր»:

«Կրնաս տղան պատուցները դուրսը կառքը դուրս հանէ, և ես վար բերեմ տղան»:

«Շատ աղէկ», ըսաւ Հարի բարձր ձայնով երբ պտուտակը գրպանը կը դնէր, և շուտով հնազանդեցաւ իր մօր:

«Հօրեղբայր Գուրիշէրնոս, հրաման կու տան որ այս առաւօտ երթամ շուկայ», ըսաւ օր մը Հարի նախաճաշի ատեն: «Ես կ'ուզեմ նորէն տեսնել այն սակաւունքը զորս տեսայ երէկ»:

«Այո, Հարի, կրնաս երթալ», ըսաւ հօրեղբայրը, «չատ ուրախ կ'ըլլամ թէ որ երթաս»:

«Իայց այսօր ինձի պէտք ես, Հարի», ըսաւ մայրը, «ես կ'ուզեմ որ այսօր ինձի հետ դուրս ելլես անէն, դուն ուրիշ օր մը երթալու ես չուկայ»:

«Շատ աղէկ», ըսաւ Հարի, և կը շարունակէր ուտել ճաշը:

Հոգ չէ թէ ինչ բուռէր Հարի որ ընէր, կամ ինչ բան մերժուէր անոր խնդրած բաներէն, անոր պատասխանն էր միշտ, «Շատ աղէկ», բնաւ չէր բեր, «Ինչո՞ւ համար չեմ կրնար, ինչո՞ւ համար ընելու կամ երթալու չեմ»: Հարի ոչ միայն ստիպած էր հնազանդիլ, այլ ստիպած էր հնազանդիլ սիրով և յօժարութեամբ:

ՀՍԿԱՅ ՄԸ ՍԱՐՍԱՓՅՈՒՆՆԵԼ

Թէպէտ փիղն է չորքոտանեաց թագաւորը ուժոյ կողմանէ, երկչոտ է շատ պարագայից մէջ ինչպէս կը ցուցնէ լրագրէ մը անուած հետեւեալ պատմութիւնը:

Կրակն է մին այն բաներէն որոցմէ կը փաննայ փիղը և միշտ կը փախչի անկէ եթէ ըլլայ կարող: Չսիրեր սուր աղաղակ, և սովորաբար խոյս կու տայ անկէ: Ափրիկէի սեւերը գիտեն այս երկու բաները, և կը դորձածեն վախցունելու համար փղոց երամակները որ երբեմն կը յարձակին անոնց դիւղերուն վրայ գիշեր ատեն:

Բայց փիղը սաստիկ վախցունելու կերպերէն մին է ցուցնել անոր փորքի մուկ մը: Շատ ժամանակ չընել, փիղ մը դրեթէ պիտի կործանէր ամբողջ մուսէնն մը և դազանաց փակարան մը՝ փորքի մուկի մը համար միայն: Կրթութի թէ մուսէնին մէջ գտնուող փորքիկ ճերմակ մուկ մը առիթ գտնելով դուրս ելաւ իւր վանդակէն և բնապէս ուղեց փախչիլ: Ճիշդ այն ատեն մէկը տեսաւ փորքիկ ճերմակ կենդանին տախտակամածին վրայ և ջանաց բռնել զայն: Բայց մուկը չէր ուզեր կորսնցունել իւր ազատութիւնը, և ուստի, ինչպէս սովոր են մկները, չորս դէն նայեցաւ տեսնել թէ կայ յարմար ծակ մը ուր աներևոյթ ըլլար: Տախտակամածին վրայ փղին տարուբերող կնճթին

ծակերէն մին թուեցաւ անոր յարմարագոյն ապաստանարան, և վանճուրոյ ահաբեկեալ մկնիկը ցատկեց անոր մէջ: Վայ, կայծ մը վառօդով լի տակառի մը մէջ քան զայս աւելի աղմուկ չփոթի հաղիւ կրնար յառաջ բերել: Փիղը կատողեցաւ մէկ երկվայրկենի մէջ, և սուկալի ճշով կանգնեցաւ ետեւի սուքերուն վրայ շարժելով միանգամայն իւր կնճիթն օդին մէջ: Կը քաշէր և կը ձկտէր իւր շղթաները մինչև գրեթէ գանձը փրցունելու չափ: Աստ և անդ կը զարնէր ինքզինք կատարեալ երկիւղի տաղանայով և կատաղութեամբ, և բոլոր ժամանակին մէջ անոր տարօրինակ գոռիւնովը լեցաւ չէնքն ամբողջ:

Փղին այս աղաղակներէն աղբուցան նաև բոլոր միւս կենդանիք որ անոր հետ կը գտնուէին փակարանին մէջ, և անոնք ևս սկսան ճչել և գոռալ, այնպէս որ կատարեալ խաբէրն մը դարձաւ այն գազանաց գոռիւնով, ունայրու ձայներով, կաղկանձիւնով և ճիչերովը: Պահապանք գրեթէ չէին գիտեր թէ ո՞ր կողմ վազեն: Անոնք չէին գիտեր մինչև անգամ թէ ի՞նչ էր այս վրդովման և սասանութեանց պատճառը, բայց գայտ միայն գիտէին թէ՛ եթէ փիղը հնազարտէր շուտով պիտի կտորէր իւր շղթաները և հաւանականապէս պիտի ճեղքէր անցնէր չէնքին պատերէն դուրս: Շէնքին վերաբերեալ աներկիւղ շուն մը ջանաց կատարել իւր պարտքը և ցատկեց փղին վրայ: Բայց վիթխարի փիղը ուշադրութիւն չուսու անոր խեղճ յարձակման: Եւ մինչ ուրիշ հնար կարող չըլլալով գտնել կը խորհէին գնալով մը արձակել կատաղի կենդանին ուղեղին, ահա ի մեծ զարմացումս պահապանաց՝ փորքիկ մուկը ձանձրացած իւր անհանդիստ աեղէն, դուրս նետուեցաւ փղին կնճթէն և փախաւ: Այնուհետեւ խաղաղութիւնը թագաւորեց վերասին:

Փիղ պահողները կը խորհին թէ փիղերուն մկներէն վախնալուն պատճառն է սուկումը որ մի գուցէ փորքիկ կենդանի մի մանչ անոնց կնճթէն ներս ճիշդ ինչպէս ըրաւ ճերմակ մուկը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԸ ԿԼԱՍՍԹՈՆԻ ՎՐԱՅ

Լոնտոնի Բէլ Մէլ Կոլէ՞ լրագրողը կը պատմէ նշանաւոր դիպումը մը որ կը ցուցնէ անձին կառավարութիւնը «Անգղիոյ Մեծարոյ Մերուռոյն», Մր. Կլաստիստի: Մր. Կլաստիստ մինչ կը ծանապարհորդէր խուճ մը բարև կամներով Ալպեան լեռանց մէջ, կառքը ճամբուն վրայ յանկարծ պատահեցաւ արջառներու երամակի մը որոյ առջին ինկած էր ահագին ցուլ մը որ չէր ուղեր ետ գառնալ: Կառքին լծուած ձիերը վախցան և սկսան ետ ետ երթալ: Ճամբան շատ նեղ էր և անոր մէկ կողմն էր դահաւանդ: Այս փորձանաւոր վայրկեանին Մր. Կլաստիստ վար ցատկեց կառքէն և առնլով

չալ մը, մտտեցաւ ցուլին անոր քովէն, և նետեց զայն անոր գլխուն վրայ: Կենդանին յանկարծակիի եկաւ, և անդէորդները (հովուները) կարող եղան այսպէս տանել զայն ճամբուն լայն մասը, ուսկէ կառքը կրնար անցնել ապահով:

Աղէկ բան է տղայոց և պատանեաց համար ալ, գիտնալ առաջուց թէ ինչ ընել լաւագոյն է իրենց անձանց և բարեկամաց համար երբ կը պատահի անակնկալ արկած մը, զոր օրինակ կրակ, կամ խեղդուիլ, կամ նաւաբեկութիւն, փոթորիկ և երկրաշարժ, և այն ատեն չչուարիլ, այլ միտք բերել թէ ինչ էր այն, և ընել:

ՊԱՏՄՈՒՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Փետրուար ամսոյ հանելուկին պատասխանն է Առակ ԻԲ. 1 համարը, «Կարի անունը շատ հարստութենէն աւելի բնոր է»: Չօր լուծեցին:

- Նեկոմիդիա . — Նալկանոյշ Ե. Կոստիկեան
- Կ. Պոլիս . — Լեւոնէլ Կոստիկեան
- Պարսի . — Սարգիս Մարտիրոսեան
- Սեւեիկե . — Գարուծիւնեան
- Յ. Գուրգէնեան
- Չմեւնիս . — Ա. Կառաւար Մ. Իգնատիոսեան
- Պարսիկալ . — Յովհաննէս Ս. Ալեքսանտրեան
- Ս . — Յիւսէիկ Լուսինեան
- Ս . — Վիգթորիա Մ. Սելեւեան
- Ս . — Նուարդ Մ. Սելեւեան
- Նոտեմբ . — Առշափր Գ. Քեմալեան
- Ս . — Յովհաննէս Ս. Տայրեան
- Ատարազար . — Վահան Գ. Ծամանուկեան
- Գուրագլէն . — Գ. Ս. Գաբրիէլեան


Յուշուար ամսոյ հանելուկին ուղիղ պատասխանը գտած է նաև Գուրագլէն . — Գ. Ս. Գաբրիէլեան:

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

- ԵՈՒՆԿԻՆ ՄԸ
- 1. Հեղին թռուանց մին:
- 2. Գաւթի գառեաց մին:
- 3. Ամենացուց մի թագաւորը:
- 4. «Հեշտակաց հացը»:
- 5. Յուցական գերանուն մը:
- 6. Հոյ գեբ մը:

Այս հինգ բառերը և մէկ գիրք միմեանց ներքե շարէ, այնպէս որ անոնց առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ գրիւրը ճիշդ միմեանց ներքե գտլով սխառ կազմեն: Իւրաքանչիւր յաջորդ բառ իւր նախորդէն կարճ ըլլալով, կ'ուճեանա ետանկին մը: Գրիւրու վերջիլեալ սխառները ձախ կողմէն սկսեալ վերէն վար կարգադրուելով կարգաւ կը կազմեն:

- 1. Ահարոնի որդւոց մին:
- 2. Երկին ինտուացեալ:
- 3. Յուդայի մի թագաւորը:
- 4. «Սկեզէն էր»:
- 5. Ժամանակի բաժանում մը:
- 6. Հոյ գեբ մը:



Ամերիկայի Միտիոնարաց Ինքնուրոյն Կողմէն, Արտօնաւոր Պ. Պ. ՊՐԻՆ Ե. ՏՊՐԵՆ Խմբագրող Է. Մ. ՊԱՐԵՐՈՎ Ֆինանսներու Եօզուշու, Ամերիկայի Իւն:

ԿՈՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՈՅԱՅԵԱՆ